



ԽՐԱՅՐԵՔ ՁԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Ինտենսիվ անասնապահության պահանջները հաճախ պարզապես են դառնում արոտավայրերի դեգրադացմանը, որի հիմնական պարզապես գերաբաժանումն է: Արոտավայրերում ընդհանուր կենդանիների գլխաքանակի չհամակարգված և չվերահսկվող ավելացումով արածեցումը, հանգեցնում է բուսական համակեցությունների խախտմանը և դրանց վերականգնվելու կարողության նվազմանը: Այս խնդրի հաղթահարման համար ներկայումս լայնորեն կիրառվում է բնական կերահանդակների բարելավումը: Պարարտացվում է հողը, քիմիական ճանապարհով վերացվում են մոլախոտերը, անձրևացման եղանակով կիրառվում է արհեստական ոռոգում: Արդյունքում՝ բնական արոտավայրը վերածվում է բարձր արդյունավետության կերահանդակի: Այս միջոցառումների օգնությամբ էապես բարձրանում է արոտավայրի արդյունավետությունը: Գյուղատնտեսական արտադրության մեջ բերքի չափն ու որակը մեծապես կախված են դաշտային աշխատանքների կազմակերպումից, հողի մշակումից, ցանքից ու բերքահավաքից, ինչպես նաև բույսերի խնամքի որակից: Հաճախ անորակ աշխատանքը հանգեցնում է բերքի կորստին, գյուղատնտեսական արտադրանքի որակի նվազմանը կամ ինքնարժեքի բարձրացմանը:

Բացառիկ նշանակություն ունի նաև **անտառային** բուսականության պահպանումը և դրա ռացիոնալ օգտագործումը: Անտառների ինքնավերականգնմանը մեծ վնաս են հասցնում անտառահատումները, հատկապես, երբ հատվում են առավել արժեքավոր ծառատեսակները (կաղնի, հաճարենի): Անտառահատման հետևանքով գոյացած նոսրուրներում արագ ձևավորվում են նոր էկոհամակարգեր (անցանկալի բույսեր և կենդանիներ), որոնք արգելակում են անտառի վերականգնմանը: Չհամակարգված անտառահատումներից հատկապես լուրջ վնաս են հնագույն ժամանակներից պահպանված **մնացորդային (ռելիկվային) բուսատեսակները**, որոնք դժվարությամբ են դիմակայում փոփոխվող պայմաններին և կարող են լիովին վերանալ:

Անտառային տարածքների պահպանման լավագույն միջոց է նոր անտառատնկումները, ընդ որում այն մշտապես պետք է գերազանցի անտառ-

հասրումների ծավալին: Լուրջ և դժվար հաղթահարելի խնդիր է անբառների առողջության պահպանումը: Վնասատուների դեմ պայքարը մեծամասամբ պերական աջակցության կարիքն ունի: Թունաքիմիկատներով անբառային քարածքների լայնամաշտար բուժական աշխատանքները իրականացվում են հատուկ օդանավերի և անօդաչու թռչող սարքերի միջոցով: Առավել կարևոր է անբառի սանիտարական վիճակի մշտական հսկողությունը, այդ դեպքում ավելի հեշտ է բացահայտել ծառերի հիվանդության պարճառները, վնասատուների կուտակման վայրերը և քարածվածությունը:

Նմանատիպ ջանքեր է պահանջում նաև անբառային հրդեհների դեմ պայքարը: Անբառային հրդեհները մեծ սպառնալիք են էկոհամակարգերի գոյության պահպանման համար, քանի որ ծառերի այրվելու հետ ոչնչանում են նաև մյուս բուսատեսակները, կենդանական աշխարհը: Այրված քարածքների բնականոն վերականգնումը բավականին երկար ժամանակ և ջանքեր է պահանջում, իսկ խոշոր մասշտաբների դեպքում կարող է անդառնալի հետևանքներ ունենալ: Ավելի դյուրին է անբառային քարածքներում մարդկանց ներկայության վերահսկումը, քանի որ հրդեհների ծագման պարճառները հիմնականում մարդածին են: